Primacy of the Armenian Apostolic Orthodox Church
of the United Kingdom and Republic of Ireland
His Grace Bishop Hovakim Manukyan, Primate

Saint Yeghiche Armenian Church Parish
Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծուխ

Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan
13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB
Registered Charity No 1173403
Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. info@styeghiche.org.uk
www.styeghiche.org.uk https://www.facebook.com/StYeghiche

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԵՐԿԼԵԶՈՒ ԹԵՐԹԻԿ - SUNDAY BILINGUAL BULLETIN

1: Today's Scripture Reading, 24th December 2023 Bulletin 54/2023

Fifth Sunday of Advent

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻՆ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ 7:11-25

Ղեւտական քահանայութեան անկատարութիւնը

Գիտենք, թէ Ղեւտացիներու քահանայութիւնն էր հիմը սրբութեան այն օրէնքին, որ Իսրայէլի ժողովուրդին տրուեցաւ: Արդ, եթէ կարելի ըլլար այդ քահանայութեան միջոցաւ կատարելութեան հասնիլ, Աստուած ի՞նչ պէտք պիտի ունենար նոր քահանայապետ մը տալու Մելքիսեդեկի օրինակով եւ ոչ՝ Ահարոնի քահանայութեան շարունակութենէն: Միւս կողմէ, քահանայութեան փոխուելուն հետ սրբութեան օրէնքն ալ պէտք էր փոխուէր. որովհետեւ Քրիստոս, որուն մասին կը խօսուի, կը պատկանէր ուրիշ ցեղի մը, որուն անդամներէն ո՛չ մէկը քահանայութեան պաշտօնը ստանձնեց երբեւիցէ: Արդ, յայտնի է՝ թէ մեր Տէրը Յուդայի ցեղէն էր, մինչդեռ այդ ցեղէն գալիք քահանայութեան մը մասին Մովսէս ոեւէ բան չըսաւ:

Յաւիտենական քահանայ մը՝ Մելքիսեդեկին պէս

Փոփոխութիւնը աւելի բացորոշ է անով՝ որ կը յայտնուի քահանայ մը որ Մելքիսեդեկի նման է. այսինքն՝ մարմնաւոր կեանքի յատուկ օրէնքներու եւ կարգերու համաձայն չէ՛ որ քահանայ եղած է, այլ՝ յաւիտենական կեանքի մէջ ի զօրու եղող օրէնքով: Անոր մասին վկայեց Սուրբ գիրքը, ըսելով. «Դուն յաւիտեան քահանայ ես, Մելքիսեդեկին պէս»: Բացայայտ է, թէ նախկին պատուիրանը մէկդի կը դրուի, անզօր եւ անօգուտ ըլլալուն համար, որովհետեւ Օրէնքը չկրցաւ ոեւէ բան կատարելութեան հասցնել. եւ հիմա մեզի տրուեցաւ աւելի լաւ յոյս մը, որով Աստուծոյ կը մօտենանք:

Աւելին, այս նոր քահանայութիւնը երդումով տրուեցաւ, մինչդեռ միւսներուն քահանայութիւնը երդումով տրուած չէ: 21Քրիստոս քահանայ եղաւ Աստուծոյ երդումով, ինչպէս Սուրբ գիրքը կ'ըսէ.–
«Տէրը անդառնալի երդում ըրաւ, ըսելով.
"Դուն յաւիտեան քահանայ ես"»:

Եւ այսպէս, Յիսուս գերազանց ուխտի մը երաշխաւորը եղաւ:

Ի վերջոյ, միւս քահանաները թիւով շատ կ'ըլլային, որպէսզի մէկուն կամ միւսին մահով՝ քահանայութիւնը չընդհատուէր: Բայց որովհետեւ Յիսուս յաւիտեան կ'ապրի, իր քահանայութիւնն ալ անվախճան է: Ուստի նաեւ կրնայ վերջնականապէս փրկել անոնք՝ որոնք իր միջոցաւ Աստուծոյ կու գան, որովհետեւ միշտ կենդանի ըլլալով՝ տեւաբար բարեխօս կ'ըլլայ անոնց համար:

The Epistle of St Paul to the Hebrews 7:11-25;

Jesus Like Melchizedek

If perfection could have been attained through the Levitical priesthood—and indeed the law given

Our Aim;
St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.

2: A short interpretation of the Scripture reading

to the people established that priesthood—why was there still need for another priest to come, one in the order of Melchizedek, not in the order of Aaron? For when the priesthood is changed, the law must be changed also. He of whom these things are said belonged to a different tribe, and no one from that tribe has ever served at the altar. For it is clear that our Lord descended from Judah, and in regard to that tribe Moses said nothing about priests. And what we have said is even more clear if another priest like Melchizedek appears, one who has become a priest not on the basis of a regulation as to his ancestry but on the basis of the power of an indestructible life. For it is declared:
"You are a priest forever, in the order of Melchizedek." [a]

The former regulation is set aside because it was weak and useless (for the law made nothing perfect), and a better hope is introduced, by which we draw near to God.

And it was not without an oath! Others became priests without any oath, but he became a priest with an oath when God said to him:
"The Lord has sworn and will not change his mind:
'You are a priest forever.' " [b]

Because of this oath, Jesus has become the guarantor of a better covenant.

Now there have been many of those priests, since death prevented them from continuing in office; but because Jesus lives forever, he has a permanent priesthood. Therefore he is able to save completely [c] those who come to God through him, because he always lives to intercede for them.

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 19:12-28

Ուրեմն ըսաւ. «Ազնուական մարդ մը գնաց հեռաւոր երկիր մը՝ իրեն թագաւորութիւն ստանալու եւ վերադառնալու: Իր տասը ծառաները կանչելով՝ տասը մնաս տուաւ անոնց, ու ըսաւ անոնց. "Շահարկեցէ՛ք՝ մինչեւ որ գամ":

Անոր քաղաքացիները կ'ատէին զայն, եւ պատուիրակութիւն մը ղրկեցին անոր ետեւէն՝ ըսելով. "Չենք ուզեր որ ասիկա թագաւորէ մեր վրայ":

Բայց երբ ան վերադարձաւ՝ թագաւորութիւնը ստանալով, իրեն կանչեց այն ծառաները՝ որոնց դրամ տուեր էր, որպէսզի գիտնայ թէ ո՛վ ի՛նչպէս շահագործած էր:

Առաջինը եկաւ եւ ըսաւ. "Տէ՛ր, քու մնասդ՝ տասը մնաս վաստկեցաւ": Ան ալ ըսաւ անոր.

"Ապրի՛ս, բարի՛ ծառայ. որովհետեւ ամենափոքր բանին մէջ հաւատարիմ եղար, տա՛սը քաղաքի վրայ իշխանութիւն ունեցիր":

Երկրորդը եկաւ ու ըսաւ. "Տէ՛ր, քու մնասդ՝ հինգ մնաս բերաւ": Եւ ըսաւ անոր. "Դուն ալ հի՛նգ քաղաքի վրայ եղիր":

Ուրիշ մը եկաւ ու ըսաւ. "Տէ՛ր, ահա՛ քու մնասդ՝ որ կը պահէի թաշկինակի մը մէջ ծրարած, քանի որ կը վախնայի քեզմէ. որովհետեւ դուն խիստ մարդ մըն ես, կը վերցնես չդրած բանդ, եւ կը հնձես չսերմանածդ":

Ան ալ ըսաւ անոր. "Բերանո՛վդ պիտի դատեմ քեզ, չա՛ր ծառայ: Գիտէիր թէ ես խիստ մարդ մըն եմ, կը վերցնեմ չդրած բանս ու կը հնձեմ չսերմանածս. ուրեմն ինչո՞ւ չտուիր իմ դրամս սեղանաւորներուն, որպէսզի եկած ատենս՝ տոկոսո՛վ պահանջէի զայն":

Քովը կայնողներուն ըսաւ. "Առէ՛ք ատկէ մնասը, եւ տուէ՛ք անոր՝ որ տասը մնաս ունի. (Ըսին իրեն. "Տէ՛ր, ան տա՛սը մնաս ունի".) որովհետեւ կը յայտարարեմ ձեզի թէ ամէն ունեցողի պիտի տրուի, ու չունեցողին՝ ունեցա՛ծն ալ պիտի առնուի իրմէ: Բայց այդ թշնամիներս, որոնք չէին ուզեր որ իրենց վրայ թագաւորեմ, բերէ՛ք հոս եւ մեռցուցէ՛ք իմ առջեւս"»:

Այս բաները խօսելէն ետք, յառաջ գնաց՝ որ բարձրանայ Երուսաղէմ:

The Holy Gospel of Jesus Christ according to Luke 19:12-28

He said: "A man of noble birth went to a distant country to have himself appointed king and then to return. So he called ten of his servants and gave them ten minas. [a] 'Put this money to work,' he said, 'until I come back.'

"But his subjects hated him and sent a delegation after him to say, 'We don't want this man to be our king.'

“He was made king, however, and returned home. Then he sent for the servants to whom he had given the money, in order to find out what they had gained with it.

“The first one came and said, ‘Sir, your mina has earned ten more.’

“ ‘Well done, my good servant!’ his master replied. ‘Because you have been trustworthy in a very small matter, take charge of ten cities.’

“The second came and said, ‘Sir, your mina has earned five more.’

“His master answered, ‘You take charge of five cities.’

“Then another servant came and said, ‘Sir, here is your mina; I have kept it laid away in a piece of cloth. I was afraid of you, because you are a hard man. You take out what you did not put in and reap what you did not sow.’

“His master replied, ‘I will judge you by your own words, you wicked servant! You knew, did you, that I am a hard man, taking out what I did not put in, and reaping what I did not sow? Why then didn’t you put my money on deposit, so that when I came back, I could have collected it with interest?’

“Then he said to those standing by, ‘Take his mina away from him and give it to the one who has ten minas.’

“ ‘Sir,’ they said, ‘he already has ten!’

“He replied, ‘I tell you that to everyone who has, more will be given, but as for the one who has nothing, even what they have will be taken away. But those enemies of mine who did not want me to be king over them—bring them here and kill them in front of me.’ ”

Jesus Comes to Jerusalem as King

After Jesus had said this, he went on ahead, going up to Jerusalem.

Ս. ԴԱՎԻԹ ՄԱՐԳԱՐԵԻ ԵՒ ՀԱԿՈԲՈՍ ՏՅԱՌՆԵՂԲԱՅՐ ԱՌԱՔՅԱԼԻ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅԱՆ ՕՐ

Ս. Դավիթ մարգարեն Բոազի և Հռութի ծոռն էր: Նա Աստվածաշունչ մատյանի Սաղմոսաց գրքի հեղինակն է, նաև շնորհալի, քաջ, իմաստուն, ճարտասան, գեղեցիկ տեսքով մի մարդ: Եղել է հովիվ: Փղշտացիների հարձակման ժամանակ հաղթել է հսկա Գողիաթին: Սավուղի մահից հետո Իսրայելի թագավորն է եղել և հիմնադրել է Երուսաղեմ քաղաքը: Հին Կտակարանի ամենամեծ և ազդու դեմքերից է: Աշխարհի Փրկիչ Հիսուս Քրիստոս նրա սերնդից է, որով էլ արժևորվում է:

Ս. Հակոբոս Տյառնեղբայրն ավետարանական սրբերի և «Գործք Առաքելոց»-ի սրբերի միջև կապող օղակն է: Նա Նախնական Եկեղեցու տիրական դեմքերից է և Երուսաղեմի առաջին եպիսկոպոսը: Հովսեփիոս հրեա պատմիչը նրան «արդար» է անվանել: Վարքագրական աղբյուրների համաձայն՝ ոմանք նրան պատվիրում են բարձրանալ աշտարակի վրա և Հիսուսի դեմ չարախոսել: Սակայն նա խոսում է Հիսուս Մեսիայի մասին, Ով նստած է Աստծո Աջում և գալու է դատելու աշխարհն արդարությամբ: Շատերն հավատի են գալիս, բայց չարակամները սրբին աշտարակից վայր են նետում: Ըստ ավանդության՝ թաղված է Երուսաղեմի Հայոց Պատրիարքության Ս. Հակոբյանց Մայր Տաճարում: Նրա անունով մեզ է հասել ընդհանրական մի թուղթ:

Հայ Եկեղեցին Դավիթ մարգարեի հիշատակը տոնում է Հակոբոս Տյառնեղբոր հետ, որովհետև եթե Դավիթը Քրիստոսի «նախահայրն» է ըստ մարմնի, ապա Հակոբոսը՝ նրա «եղբայրը» և ազգականը: Այս երկու սրբերի անունները միասին են տոնում՝ խորհրդանշելու Հին և Նոր Ուխտերի միաձուլումը քրիստոնեության մեջ:

Հայ Առաքելական Եկեղեցին Ս. Դավիթ մարգարեի և Հակոբոս Տյառնեղբայր առաքյալի հիշատակը տոնում է Սուրբ Ծնունդին նախորդող ավագ տոների ժամանակ:

COMMEMORATION OF THE PROPHET ST. DAVID AND APOSTLE ST. JAMES, BROTHER OF JESUS

Prophet St. David was the great-grandson of Boaz and Ruth. The Holy Bible depicts him as a psalmist, gifted, wise, handsome man and orator. He was a shepherd. During the battle against Philistines he killed the giant Goliath. After the death of Saul he became the king of

Safeguarding and Health and Safety issues are taken seriously by Saint Yeghiche Armenian Church, copies of the policy document are available for view, for any related issues please report or contact members of the parish council.

Israel and founded the city Jerusalem. He is the author of the book of Psalms and one of the

Israel and founded the city Jerusalem. He is the author of the book of Psalms and oane of the greatest and influential figures of the Old Testament. Special importance is accorded to the fact that he is the offspring of Our Lord Jesus Christ.

St. James, brother of Jesus, is the combining link between the Evangelical saints and the saints mentioned in the Acts of the Apostles. He is one of the important figures of the Initial Church and the first Bishop of Jerusalem. Jewish historian Hovsepius characterizes him as "righteous".

According to hagiographical sources some people forced him to get on the tower and slander against Jesus. However, getting on the tower, he started to speak about Jesus the Messiah who sat on the right side of God and would come to judge the world fairly. Many people were converted, but others threw the saint down from the tower. According to the tradition St. James is buried in the Cathedral of St. James of the Armenian Patriarchate of Jerusalem. One letter from James has been preserved.

in order to symbolize the merging the Old and New Testaments in Christianity. The Armenian Apostolic Church commemorates the memory of the Prophet St. David and Apostle St. James, brother of Jesus, during the main feasts preceding the Feast of the Holy Nativity and Theophany of Our Lord Jesus Christ.

DAILY BIBLE READINGS FOR 2023 According to the Lectionary of the Armenian Apostolic Church

25 December	**St. Stephen the Proto-Deacon and the First Martyr** Acts 6:8-8:2; John 12:24-26
26 December	**The Holy Apostles Peter and Paul** Wisdom 9:13-10:2; Isaiah 28:16-19; 2 Peter 1:12-19; 2 Timothy 4:1-8; John 21:15-22
27 December	Hebrews 5:11-6:8; Luke 18:18-27
28 December	The Holy Apostle James and John the Evangelist, Sons of Thunder Wisdom 7:21-24; Jeremiah 16:16-21; Acts 12:1-11, James 1:1-10; 1 John 1:1-7; John 21:20-25
29 December	Eve of the Fast of the Nativity Hebrews 6:9-7:10; Luke 19:1-10
30 December	First Day of the Fast of the Nativity Sts. Basil (the Great) and his brother Gregory of Nyssa, Sylvester the Patriarch of Rome, and Father Ephrem the Syrian Proverbs 11:2-11; Isaiah 4:2-6; Colossians 1:21-29; John 10:11-16

Աստուած մշտնջենաւոր, Աստուած յաւիտենական, որ վարի աշխարհին (երկրի) վրայ իբրեւ լոյս ծագեցար եւ լուսաւորեցիր մեզ մեր խաւարային մեղքերէն: Ով անչափդ Աստուած, որ մեզի համար չափի մէջ մտար եւ Սուրբ Հոգիիդ շնորհները հեղելով՝ տարածեցիր արարածներուդ վրայ: Այժմ եւ յաւիտենապէս բարեբանուած ես, ով Ամենամեծդ Աստուած՝ Հօր եւ Ամենասուրբ Հոգիիդ հետ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս. ամէն:

*****

O God everlasting, O God eternal, Who has shone forth as light upon this lower world and has enlightened us in our dark sins; O God infinite, Who did come into finitude for our sake and did pour down and spread the gifts of the Holy Spirit over Your creatures, You are praised now and for the ages of all times, O Almighty God, together with the Father and all-holy Spirit, now and always and unto the ages of ages. Amen



Dear Parishioners and Armenian Community Members,

St Yeghiche Armenian Church, has published its 2024 wall calendar, with both Armenian Religious Feast dates, and U.K. holiday dates.

These are out for sale at St Yeghiche Armenian Church, from this Sunday, 19th November 2023, and till stocks last.

We encourage every Armenian household to have one and bring our Lord's blessing to your home and family.

Thank you

St Yeghiche Armenian Church Parish Council

The Movement of 120,000.00 people
out of their ancestorial homeland
is NOT an evacuation
it's ethnic cleansing.
It's Genocide.

Aid Artsakh (Karabagh)

Help the Artsakh Armenian Families

The St Yeghiche Armenian Church Parish ask you to donate generously to help our compatriots
on
The Ground Relief work for Armenian Evacuees from Nagorno-Karabakh

St Yeghiche Armenian Church Parish has started to raise much needed funds to assist the displaced brothers and sisters of Artsakh and their families .

Kindly donate generously using the following bank details:
Bank HSBC | ST Yeghiche Armenian Church Parish Ltd.
Sort Code 40-02-26 | Account No. 42674432
IBAN GB73MIDL40022642674432 | BIC MIDLGB2106F
If you are a UK tax payer kindly ask for our Gift Aid Form

PayPal
Scan. Pay. Go.

We have provided special collection box at church for your kind attention.

Alternatively you may also use our credit card terminal at church for your convenience.

The funds will be directed towards needy Families.

PLEASE GIVE GENEROUSLY

St Yeghiche Armenian Church Parish

Registered Charity No 1173403

13b Cranley Gardens, Kensington London SW7 3BB

t.+44 20 7373 8133 e. info@styeghiche.org.uk w. www.styeghiche.org.uk

New Year and Christmas Church Service Timetable at

St Yeghiche Armenian Church

Sunday, 24th December 2023 — **11:00** Divine Liturgy Սբ. Պատարագ

New Year / Նոր տարի

Sunday, 31st December 2023 — **11:00** Divine Liturgy and blessing of Pomegranates
Սբ. Պատարագ, եւ Նռնօրհնէք

Jerakalouys, Christmas Eve Prayers / ՃՐԱԳԱԼՈՅՑ ՍԲ.ԾՆՆԴԵԱՆ

Friday, 5th January 2024
16:00 Scripture readings
17:00 Christmas Eve Eucharist and Holy Communion
18:55 Blessing of home.
Սբ. Ծննդեան Ճրագալոյցի
Սբ. Պատարագ Եւ տնօրհնէք

Theophany and Epiphany / ՍԲ. ԾՆՈՒՆԴ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅՏՆՈՒԹԻՒՆ

Saturday, 6th January 2024 — **11:00** Episcopal Divine Liturgy followed by Blessing of the Water.
Սբ. Պատարագ եւ Ջրօրհնէք
(Պատարագիչ՝ Յովակիմ Սրբ.),

Blessing of the Graves

Sunday, 7th January 2024
10.00 Divine Liturgy Սբ. Պատարագ
1:30 – 3:00 Rev Fr Nshan will be available at Gunnersbury Cemetery to conduct individual prayers.
If you require blessing at any other cemetery, please contact us to arrange Clergy visit.

All faithful are invited and encouraged to join us with their prayers.
For enquiries please contact any member of the St Yeghiche Armenian Church Parish Council, manning the desk at the church entrance or email info@styeghiche.org.uk

May the Joy and Peace of Christmas be with you now and throughout the coming year

3: This week's message from our Priest in Charge

Մեկնութիւն եւ հոգեւոր պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից.

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն

«Ես եմ Տէրն առաջին, նոյնն եմ լինելու եւ յաւիտեան» (Ես. 41:4):

Ակնյայտ է, որ Նրանից առաջ չի եղել ոչ ոք եւ Նրանից յետոյ եւս ոչ ոք չի լինելու: Այսինքն՝ Նա սկիզբ չունի եւ յաւիտեան է, սա յատուկ է միան անմահ յաւիտենութեանը» (սբ. Յովհան Ոսկեբերան)

Աստուածասէ՛ր եղբայրներ եւ քոյրեր,

Անհնար է հոգեւոր խոկում չունենալ տարեվերջին: Ամէն օր է Աւետարանը մեզ յորդորում ինքնաքննութեան հաշուետու աղօթք ունենալ, որ արեգակը մեր բարկութեան կամ անարդար կեցուածքի վրայ մայր մտած չլինի, ամէն օր մարդկանց եւ Աստծոյ հետ հաշտուած գլուխը բարձին դրած լինենք:

Երեւոյթներ կան, որ ամէն օր են փոփոխւում՝ սկսած եղանակից մինչեւ մարդկանց գործ եւ տրամադրութիւն: Ոչ միայն մեզ շրջապատող ամէն բան է անցողիկ, այլեւ մենք իսկ՝ մեզ տիեզերքի կենտրոն կարծող մարդիկս էլ ենք անցողիկ, ինչպէս հնում էին ասում՝ անցաւոր: Շատերը կը յիշեն.

«Հե՛յ ազահ մարդ, հե՛յ անգոհ մարդ, միտքդ երկար, կյանքդ կարճ, Քանի՛ քանիսն անցան քեզ պէս, քեզնից առաջ, քո առաջ. Ի՞նչ են տարել նրանք կյանքից, թէ ինչ տանես դու քեզ հետ, Խաղաղ անցիր, ուրախ անցիր երկու օրուան էս ճամփեդ» (Յովհ. Թումանեան):

Հաւատքի աչքերով նայող բանական ամէն մարդ գիտի, որ ոչ միայն ինքը, այլեւ ամբողջ աշխարհն է անցողիկ: Ինչպէս Քրիստոս է ասում. «Երկինքն ու երկիր կանցնեն…»՝ ցոյց տալով մեզ համար անխախտ թուացող երկնքի եւ երկրի ոչ յաւիտենական լինելը: Մեր անխուսափելի կորուստների շարքի մէջ մենք յաճախ տագնապի, խուճապի հոգեվիճակի մէջ ենք յայտնւում, ինչպէս հանրային մեծ հուզումների, ճգնաժամների, մեծ աւերների կամ պատերազմների ժամանակ է լինում: Ուզում ենք հենուել չփոփոխուող, հաստատուն զօրութեան վրայ: Ծնողները, սիրելի ու հարազատ մարդիկ, իրենց ամբողջ սիրով եւ մեզ հետ լինելու ցանկութեամբ, աւաղ, ուշ թէ շուտ երկրից երկինք ճամփան են բռնում: Ժամանակի մէջ հաստատուն է Նա, որ վեր է ժամանակից, Որի միջոցով մեր ժամանակն է արժեւորւում՝ Աստուած.

«Նա է, որ փոփոխում է ժամերն ու ժամանակները:
Թագաւորներ է կարգում եւ փոփոխում,
իմաստուններին իմաստութիւն է տալիս
եւ խելամիտներին՝ իմացութիւն,
բացայայտում է խորին եւ ծածուկ բաները» (Դան. 3:21):

Այս օրերին, անձնային, ընտանեկան եւ համազգային լուրջ քննութեան եւ հաշուետուութեան խոկումների մէջ, մենք կարիքն ունենաք Աստծոյ հետ լուրջ զրոյցի: Հաշուետու լինելը դժուար է, մանաւանդ Աստծոյ առաջ, բայց՝ անհրաժեշտ եւ օգտակար: Մեր անձնային եւ համայնական անկումներից հնարաւոր է արագ ոտքի ելնել, վերականգնուել խղճի եւ Աստծոյ առաջ ազնիւ հաշուետութիւնից յետոյ միայն: Աստծոյ հետ մարդկութեան անցած պատմութիւնը լեցուն է անձնային եւ համայնական վերածնունդի, վերափոխումի օրինակներով: Միայն հոգեւոր այս բանաձեւն է իսկապէս գործուն: Համազգային, համահայկական վերադարձի, հոգեւոր ինքնամաքրումի եւ վերականգնման շրջանի վերածենք այս եկող տարին. Քրիստոս է ճանապարհը, այլ զարտուղի կածաններով բաւ է դեգերենք. «Յիսուս Քրիստոս նոյնն է երէկ, այսօր եւ յաւիտեան» (Եբր 13:8): Չկան այլ տէրեր ու փրկիչներ: Աստուած չի փոխուել, թող Իր նկատմամբ մեր սէրն էլ խորանայ, լրջանայ, լցնի եւ մաքրի մեր կենցաղը:

«Ես եմ Տէրն առաջին, նոյնն եմ լինելու եւ յաւիտեան»:

Սբ Եղիշէի Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան

4: Հոգեհանգիստ - Memorial Service

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

By Zvart Stepanian and Family for the soul of their Husband, Parents who was also a loving Father the late **GARO STEPANIAN**, also for their parents and relatives the late **ISHKHAN** and **FILOR ARZOYAN**, **ELBIS** and **JOSEPH STEPANIAN**, **NEVART** and **GEORGE KHLOYAN**, also for all the old and new deceased members of the **STEPANIAN**, **ARZOYAN** and **KHLOYAN** Families.

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

Please Pray For Our Sick: Please notify the Pastor whenever you know of anyone who is sick, whether at home or in the hospital. Let us pray for one another

Rev Fr Nshan Alaverdyan is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan at 07548 777 147.

Ձեր ամեն տեսակի հոգեւոր կարիքներուն եւ Խորհրդակատարութիւններուն՝ Տնօրհնէքի, հիւանդի այցելութեան, Սբ Հաղորդութեան ստանալու եւ այլ խնդրանքներուն համար դիմեցէք Եկեղեցի 020 7373 8133, կամ ուղղակի հեռաձայնեցէք **Սբ Եղիշէի Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեանի** 07548 777 147:

Hokehankist and in Liu of Flowers:
Friends and family of the deceased can make donations, in memory of their loved one, to St. Yeghiche Armenian Church General Operating Fund for prayers or in lieu of sending flowers.

ENQUIRIES:

For ecclesiastical/parish matters including requests for Christenings, Home Blessing (Dnorhnek), Donations in Lieu of Flowers, arrangements for Marriages and other church administrative matters please contact Mr Viken Haladjian, phone: **07970 146 280** or by emailing info@styeghiche.org.uk
Alternatively please approach a member of the Parish Council at church every Sunday after Badarak.
Requiem Service (Hokehankisd)
For Requiem Service (Hokehankisd), please call the administration number at **07970 146280**, or e-mail us your request to info@styeghiche.org.uk by Thursday, in order to include the name(s) of your beloved one(s) in the Sunday bulletin. There is no set monetary amount for requesting Hokehankisd; any amount donated is appropriate and appreciated. **Please remember our Church in your prayers.**

Your kind donations are gratefully accepted:

ANNOUNCEMENT:

St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the side entrance desk of the Church or visit our website www.styeghiche.org.uk

We welcomes your donations for prayers and support towards church annual expenses. **May the Lord bless you and your family, keep you away from all harm and fulfil all you prayers and dreams.**

-You may send in your donations as follows: Please post your cheques to: St Yeghiche Armenian Church Parish, *13b Cranley Gardens, Kensington, London, SW7 3BB*. Please make your cheques payable to: ***"St Yeghiche Armenian Church"***.

-You can also pay by bank transfer to St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at: HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F

-Alternatively you may use our QR Code which will enable you to make donations directly to the Church PayPal account. Please scan this QR Code to make your electronic weekly, monthly or periodical contributions. *Thank you.* **St Yeghiche Armenian Church Parish Council**

PayPal
Scan. Pay. Go.

St Yeghiche Armenian Church is a Registered Charity, Reg No 1173403.
Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.